

Կ-547՝-07.04.2020,25.05.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԱՆԻՇԻ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայությունների համարանիշի մասին» 2011 թվականի նոյեմբերի 30-ի ՀՕ-288-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել 1.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ:

«1.1 Հանրային ծառայությունների համարանիշը ամրագրվում է նաև սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձից ծնված երեխայի ծննդյան պետական գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում տրված ծննդյան վկայականում եւ ծննդի պետական գրանցման մասին տեղեկանքում»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «երեխայի բնակության վայրի տեղական ռեգիստրի» բառերը փոխարինել «բնակչության պետական ռեգիստր վարող լիազոր մարմնի» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԱՆԻՇԻ ՄԱՍԻՆ»

~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայությունների համարանիշի մասին»
~~Հայաստանի Հանրապետության~~ 2011 թվականի նոյեմբերի 30-ի ՀՕ-288-Ն օրենքի
(այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել 1.1-ին մաս հետևյալ
բովանդակությամբ:

«1.1 Հանրային ծառայությունների համարանիշը ամրագրվում է նաև սույն
~~Յ~~օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձից ծնված երեխայի ծննդյան
պետական գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում տրված
ծննդյան վկայականում և ծննդի պետական գրանցման մասին
տեղեկանքում~~Հայաստանի Հանրապետությունում գրանցված ծննդյան~~
~~վկայականում և ծննդի պետական գրանցման մասին տեղեկանքում~~»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «երեխայի բնակության վայրի
տեղական ռեգիստրի» բառերը փոխարինել «բնակչության պետական ռեգիստր
վարող լիազոր մարմնի» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման
օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՓՈՓՈՒԹԵՐԹ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՈՒՄ Մ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԱՒԽԱԳԵԻ (ՓԱՍՏԱԹՂԱՅԻՆ ԿՈՐԻ՝ Կ-547-07.04.2020-ՊԻ-011/0) ԵՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՈՒՄ Մ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԱՒԽԱԳԵԻ (ՓԱՍՏԱԹՂԱՅԻՆ ԿՈՐԻ՝ Կ-547-07.04.2020,25.05.2020-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑԿԱՑՍՈՒՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (վճարման, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկության նը	Առաջարկություն (վճարման, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն նկատելի կամ մերժելի վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	«Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» եւ «Հանրային ծառայությունների համարանիշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու	Առաջարկվում է նախագծերի վերնագրում նշված երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմարիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը: Նույն հիմքով ղեկավարվելով՝ առաջարկում ենք նշված նախագծերի 1-ին հոդվածում օրենքների վերնագրերից հետո նշված «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել	Ընդունվել է:	Ընդունվել է:

		մաին» օրենքների նախագծեր			
2.	Կառավարության	««Քաղաքացիական կացության ակտերի մաին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխության կատարելու մաին» օրենքի նախագիծ	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածում նշված «(այսուհետ՝ Օրենք)» բառերը հանել, քանի որ նախագծում օրենքին այլեւս հղում չի կատարվում:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	Կառավարության	««Քաղաքացիական կացության ակտերի մաին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխության կատարելու մաին» օրենքի նախագիծ	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածում նշված «հետեւյալ» բառը փոխարինել «ևոր» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մաին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը	Ընդունվել է	Ընդունվել է:
4.	Կառավարության	««Քաղաքացիական կացության ակտերի մաին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխության կատարելու մաին» օրենքի նախագիծ	Նախագծի 1-ին հոդվածով կատարված փոփոխության արդյունքում ծննդյան վկայականում նշվող տեղեկությունների շարքից դուրս է մտնում երեխայի սեռի մաին նշումը, որի վերաբերյալ նախագծերի փաթեթին կցված հիմնավորման մեջ որել է պարզամտում	Ընդունվել է	Ընդունվել է

			<p>Նախատեսված չէ: Միաժամանակ, հարկ ենք համարում նշել , որ «Քաղաքացիական կացության ակտերի մասին» օրենքի 23 - րդ հոդվածի 1 - ին մասի «ա» կետում ծննդյան վկայականում նշվող սեռը կույրությունների շարքում երեխայի սեռի վերաբերյալ նշումը լրացվել է 2020 թվականի մարտի 6-ին ՅՕ - 103-Ն օրենքով:</p>		
5.	Կառավարություն	<p>«Յանտրային ծառայությունների համարանիշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ</p>	<p>Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով «Յանտրային ծառայությունների համարանիշի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացվող 1.1-ին մասում նշված «Օրենքի» բառը նշել փոքրատառով , քանզի «Յանտրային ծառայությունների համարանիշի մասին» օրենքում տվյալ օրենքը մեծատառով չի նշվում:</p>	Ընդունվել է	Ընդունվել է
6.	Կառավարություն	<p>«Յանտրային ծառայությունների համարանիշի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ լրացում կատարելու</p>	<p>Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է «Յանտրային ծառայությունների համարանիշի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացվող 1.1-ին մաս հետևելով բովանդակությամբ՝ «Յանտրային ծառայությունների համարանիշը ամրագրվում է նաև սույն Օրենքի 2-րդ</p>	Ընդունվել է	Ընդունվել է

		<p>մաին» օրենքի նախագիծ</p>	<p>հողվածի 1-ին մասով սահմանված անձից ծնված երեխայ ի Հայ աստանի Հանրապետության ու նույն գրանցված ծննդյան վկայականում եւ ծննդի ախտական գրանցման մաին ստեղծականքում»: Մինչ դեռ, հարկ է նկատել, որ «Քաղաքացիական կացության ակտերի մաին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մաի, 6-րդ հոդվածի 2-րդ մաի եւ 8-րդ հոդվածի 1-ին մաի դրույթների վերլուծության նից ստացվում է, որ ախտական գրանցման ենթակա է քաղաքացիական կացության ակտը՝ տվյալ դեպքում ծնունդը եւ ոչ թե ծննդյան վկայականը, իսկ ծննդյան վկայականը կամ ծննդի ախտական գրանցման մաին ստեղծականքը տրվում կամ տրամադ- րվում է՝ գրանցված քաղաքացիական կացության ակտի հիման վրա: Ուստի, առաջարկում ենք լրացվող 1.1- ին մասը ձեւակերպել հետեւյալ խմբագրությանը՝ «Հանրային ծառայության ներքին համարանիշը ամրագրվում է նաեւ սույն Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձից ծնված երեխայի ծննդյան</p>		
--	--	---------------------------------	---	--	--

			<p>ափտական գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության նույն տրված ծննդյան վկայականում եւ ծննդի ափտական գրանցման մասին տեղեկանքում»:</p>		
7.	Կառավարություն	<p>««Հանրային ծառայությունների համարանիշի մասին» Հայաստանի Հանրապետության ն օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ</p>	<p>Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածում նշված «5-րդ» բառից առաջ նշել «Օրենքի» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդված 4-րդ մարդ:</p>	Ընդունվել է	Ընդունվել է
8.	Կառավարություն	<p>««Հանրային ծառայությունների համարանիշի մասին» Հայաստանի Հանրապետության ն օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ</p>	<p>Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածում «փոխել» բառը փոխարինել «փոխարինել» բառով, իսկ «մարմնի» բառից հետո լրացնել «բարեբան» բառը:</p>	Ընդունվել է	Ընդունվել է